



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Նոյեմբեր 2005

Ներկայացվում են 2005 թվականի նոյեմբերի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները: ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-սեպտեմբեր ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ հոկտեմբերին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-սեպտեմբերի ցուցանիշներ			
Իրական հատված							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	739.6	874.4	1,106.7	479.9	562.0	710.6	975.5
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	14.0	10.1	10.4	15.5	10.3	11.6
Արդյունաբերության աճ (%)	13.9	15.6	2.1	10.7	20.9	1.9	6.1
Գյուղատնտեսության աճ (%)	3.8	4.2	14.5	2.3	0.4	17.2	9.0
Շինարարության աճ (%)	41.5	45.5	13.4	35.2	56.9	12.7	32.8
Տրանսպորտ և կապի աճ (%)	-1.7	8.3	16.9	-4.8	10.2	16.5	11.2
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	19.7	14.1	10.5	19.2	13.6	9.4	7.3
Ծառայությունների աճ (%)	12.0	8.6	12.1	7.0	11.7	13.7	10.6
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	6.0	0.7	3.7	7.1	3.8
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	1.1	4.7	7.0	1.1	3.8	7.9	0.9
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	185.4	212.2	250.1	132.0	148.0	176.3	211.0
Ծախսեր (մլրդ դրամ)	235.8	242.0	295.9	162.3	173.8	206.2	261.0
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	7.8	-8.1	-2.0	-2.4	-2.3	5.0	-3.0
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.6	13.1	13.2	15.0	14.1	14.2	14.6
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	17.3	14.9	15.6	18.5	16.5	16.6	18.1
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.6	0.5	0.1	0.3	0.2	0.4	0.2
Արտաքին հատված							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	505.2	685.6	715.0	354.0	504.3	501.9	687.0
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	987.2	1,279.5	1,351.0	670.3	936.1	961.6	1,248.3
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-482.0	-593.9	-635.9	-316.3	-431.8	-459.8	-561.3
Արտահանման աճ (%)	47.8	35.7	4.3	45.4	42.5	-0.5	36.9
Ներմուծման աճ (%)	12.5	29.6	5.6	7.5	39.6	2.7	29.8
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	20.3	21.2	17.9	20.5	23.9	20.1	17.9
Դրամավարկային հատված							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	203.1	233.8	285.9	177.9	212.1	253.5	332.4
ՀՀ ԿԲ շուկա արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	123.7	157.8	168.9	94.9	143.5	145.0	224.6
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.7	6.9	6.6	4.9	5.0	4.9	4.3
Փողի բազմարկիչ	2.0	2.1	2.2	2.0	2.0	2.2	1.9

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտաբյուջային և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
	տարեկան ցուցանիշներ			2005-ի ամսական ցուցանիշներ									
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)													
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.3	3.9	3.7	4.9	-	-	3.2	3.8	3.9
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	6.0	4.6	4.6	5.3	4.9	5.7	5.3	5.1	-	-
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	18.0	18.0	17.0	17.0	16.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.0	18.8	19.1	16.6	18.9	18.0	18.4	18.4	17.7	18.3
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	4.1	6.1	5.9	5.8	5.6	6.1	6.0	6.2	6.5	5.8
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	1.1	-3.7	-1.6	-3.9	0.3	-0.1	-1.4	4.1	-1.4	-1.1
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566.0	485.8	478.5	471.2	458.1	439.3	445.1	442.3	447.7	468.3	444.2	451.2
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	623.3	620.4	593.0	566.9	555.1	533.2	541.7	570.5	535.9	547.7
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	17.1	17.0	16.5	15.8	15.8	15.4	15.6	16.4	15.6	15.9
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	5.4	-0.7	-0.9	-0.9	0.1	-1.4	-4.5	-1.4	0.9	0.1
Պարենային ապրանքներ*	1.2	6.1	9.9	7.7	-0.6	-1.4	-1.3	0.0	-2.1	-6.4	-2.2	0.9	0.0
Ոչ պարենային ապրանքներ	0.2	1.9	0.6	0.8	-0.3	-0.4	-0.2	-0.3	-0.1	-0.2	0.4	1.7	0.6
Ծառայություններ	1.1	1.9	1.5	0.2	-1.4	0.6	0.1	1.0	0.4	-0.2	0.4	0.5	0.1

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Մեկ շնչին ընկնող ՅՆԱ-ն սեպտեմբերին կազմեց 192 ԱՄՆ դոլար

2005 թվականի առաջին ինն ամիսների դրությամբ տնտեսական աճը կազմեց 11.6 տոկոս՝ 1.3 տոկոսային կետով կամ 854 միլիոն ԱՄՆ դոլարով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Արդյունքում մեկ շնչին ընկնող ՅՆԱ-ն ավելացավ 265 ԱՄՆ դոլարով: Այնուամենայնիվ, նշված հավելածը հիմնականում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեքավորման արդյունք է, որի բացառման դեպքում այն կկազմեր մոտ 112 ԱՄՆ դոլար: Առհասարակ, նշված ժամանակահատվածում փոխարժեքի յուրաքանչյուր 5 դրամով արժեքավորումը, այլ հավասար պայմաններում, հանգեցրեց մեկ շնչին ընկնող ՅՆԱ-ի միջինում 9 ԱՄՆ դոլարով ավելացման:

Տնտեսական աճին առավել նպաստեցին շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերը, համապատասխանաբար, 4.6, 2.1 և 1.8 տոկոսային կետերով: Աճի առավել բարձր տեմպերով աչքի ընկան շինարարության և տրանսպորտ (և կապ) ճյուղերը՝ 32.8 և 11.2 տոկոս համապատասխանաբար: Գյուղատնտեսության ճյուղի աճը թեև դանդաղեց, բայց շարունակում է մնալ բարձր՝ 9.0 տոկոս: Նվազագույն աճը՝ 6.1 տոկոս, արդյունաբերության ճյուղում էր:

Բյուջետային հատված

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2005 թվականի հունվար-սեպտեմբերին պետական բյուջեի եկամուտները կազմեցին 258 միլիարդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 22.2 տոկոսով: Մինևույն ժամանակ պետբյուջեի միջոցներից ֆինանսավորված ծախսերի առաջանցիկ աճի պայմաններում ձևավորվեց 3 միլիարդ դրամի դեֆիցիտ:

Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ոչ հարկային եկամուտներն ավելացան 2.5 անգամ՝ կազմելով 23.9 միլիարդ դրամ: Վերջինս 10.1 տոկոսով գերազանցում է մինչ այդ ոչ հարկային եկամուտների նույնիսկ տարեկան կտրվածքով գրանցված առավելագույն մակարդակը: Հարկային եկամուտների 19.7 տոկոս աճը հիմնականում ԱԱՀ-ի և շահութահարկի գծով մուտքերի, համապատասխանաբար, 18.6 և 57.5 տոկոսով ավելացման արդյունք էր: Եկամուտների աճը զսպեցին ակցիզային հարկից և կապիտալի գործառնություններից եկամուտների գծով մուտքերի, համապատասխանաբար, 5.7 և 9.4 տոկոսով կրճատումը:

2005 թվականի հունվար-սեպտեմբերին ծախսերի 26.6 տոկոսով աճը 8.0 տոկոսային կետով գերազանցեց նախորդ տարվա նույն ցուցանիշը: Նախորդ տարվա նկատմամբ 9.7 միլիարդ դրամով ավելացավ կրթության և գիտության ծրագրերի ֆինանսավորումը: Պաշտպանության ոլորտին հատկացումներն աճեցին 8.7 միլիարդ դրամով, կրկնապատկվեց տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ծրագրերի ֆինանսավորումը:

Նախորդ տարվա ինն ամիսների դրությամբ առավելապես աճեց կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորումը՝ 24.5 միլիարդ դրամով: Ապրանքների և ծառայությունների պետական գնումներն ավելացան 17.1 տոկոսով: Սուբսիդիաները, արտաքին և ներքին պարտքերի դիմաց տոկոսավճարները կրճատվեցին, համապատասխանաբար, 13.5, 10.6 և 8.6 տոկոսով:

Արտաքին առևտուր

2005 թվականի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանումն աճեց 36.9 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 29.8 տոկոսով: Մինևույն ժամանակ և՛ արտահանման, և՛ ներմուծման կշիռները ՅՆԱ-ի նկատմամբ կրճատվեցին, համապատասխանաբար, 0.1 և 2.3 տոկոսային կետերով, որի արդյունքում կրճատվեց նաև առևտրային հաշվեկշիռը ՅՆԱ-ի նկատմամբ՝ կազմելով 17.9 տոկոս:

Թեև արտահանման աճը 7.1 տոկոսային կետով առաջանցիկ էր ներմուծման աճի նկատմամբ, այնուամենայնիվ դա բավարար չէր առևտրային հաշվեկշռի կռճատման նախադրալներ ստեղծելու համար, և ինն ամիսների համադրման տվյալներով առևտրային հաշվեկշիռը խորացավ 22.1 տոկոսով նախորդ տարվա համեմատ:

Դրամավարկային հատված

Փողի զանգվածը սեպտեմբերի վերջին՝ օգոստոսի համեմատ նվազեց 13.5 մլրդ դրամով, որը հիմնականում զուտ արտաքին ակտիվների 3.4 տոկոսով նվազման արդյունք էր: 10.1 տոկոսով կրճատվեցին արտարժույթով ավանդները, 0.7 տոկոսով՝ շրջանառության մեջ կանխիկը:

Նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ փողի զարգվածն աճեց 31.1 տոկոսով, որն ուղղեկցվեց դրամական բազմարկչի 0.3 տոկոսային կետով նվազմամբ: Վերջինս դիտարկվող ժամանակահատվածում փողի բազայի 52.3 տոկոսով աճի արդյունք էր:

Ընդհանուր առմամբ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ կրկնապատկվեցին դրամով ժամկետային ավանդները, բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը և դրամով ցայահանջ ավանդներն աճեցին, համապատասխանաբար, 42.4 և 54.5 տոկոսով: Չուտ արտաքին ակտիվների աճը նույն ժամանակահատվածում կազմեց 34.0 տոկոս, որը 11.7 տոկոսային կետով առաջանցիկ էր նույն ժամանակահատվածում զուտ ներքին ակտիվների աճից:

Հայկական դրամը դարձյալ արժեզրկվեց

Հոկտեմբերի ընթացքում հայկական դրամն արժեզրկվեց բոլոր հիմնական փոխարժեքների նկատմամբ, սակայն, ի տարբերություն օգոստոսին տեղի ունեցած արժեզարկման, այն դրսևորվեց փոխարժեքների առավել մեղմ տատանումներով: Արդյունքում հոկտեմբերին հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը նախորդ ամսվա նկատմամբ փոքր ինչ արժեքավորվեց:

Առավելագույն չափով արժեզրկումն անդրադարձավ եվրոյի նկատմամբ փոխարժեքին, որը հոկտեմբերի վերջին՝ սեպտեմբերի վերջի համեմատ արժեզրկվեց 11.8 դրամով: Հոկտեմբերի ընթացքում դրամի փոխարժեքի առավելագույն մակարդակն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմեց 455.1 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 548.4 դրամ, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 15.93 դրամ:

Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ հոկտեմբերի վերջին դրամի փոխարժեքն արժեքավորվեց՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 7.1 տոկոսով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 9.4 տոկոսով և եվրոյի նկատմամբ՝ 17.2 տոկոսով:

Սպառողական շուկա

2005 թվականի հոկտեմբերին սպառողական շուկայում տեղի ունեցավ գների 0.1 տոկոսով աճ: Դեկտեմբերի համեմատ գները 3.5 տոկոսով նվազեցին: Առաջին տաս ամիսների համադրման արդյունքներով այս տարի սպառողական շուկայում գները 0.8 տոկոսով գերազանցեցին 2004 թվականի գների միջին մակարդակը:

2005 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմեց 3.8 տոկոս՝ հունվար-օգոստոսի նկատմամբ նվազելով 1.5 անգամ: Արդյունքում երրորդ եռամսյակի դեֆլյատորը կազմեց 1.7 տոկոս:

ՀՆԱ-ի դեֆլյատորի վերջին ամիսների տատանումներն առավելապես գյուղատնտեսության դեֆլյատորի ազդեցության արդյունք են, որը ինն ամսվա կտրվածքով կազմեց -11.0 տոկոս: Նախորդ տարվա նկատմամբ առավել բարձր էր շինարարության դեֆլյատորը՝ 21.8 տոկոս:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-սեպտեմբերի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	228.0	250.1	297.9	159.9	171.6	211.1	258.0
Ընդամենը եկամուտներ	211.3	240.2	288.2	152.0	167.9	206.5	254.9
Ընթացիկ եկամուտներ	209.5	237.0	279.1	150.9	165.3	198.8	247.9
Հարկային եկամուտներ, այդ թվում	185.4	212.2	250.1	132.0	148.0	176.3	211.0
Ավելացված արժեքի հարկ	95.0	107.8	117.9	67.6	76.3	82.8	98.2
Շահութահարկ	17.4	17.6	32.0	13.0	11.5	21.8	34.3
Եկամտահարկ	12.5	16.8	20.4	8.4	11.5	14.6	18.2
Ակցիզային հարկ	35.3	39.1	40.7	25.3	27.9	29.8	28.1
Պետական տուրք	13.2	15.2	16.9	9.8	11.7	12.9	13.0
Ոչ հարկային եկամուտներ	10.9	9.5	12.0	9.2	5.6	9.6	23.9
Կապիտալ եկամուտներ	1.8	3.2	9.1	1.1	2.6	7.8	7.0
Պաշտոնական տրանսֆերտներ	16.7	9.9	9.7	7.8	3.6	4.6	3.1
Պետբյուջեի ծախսեր	235.8	242.0	295.9	162.3	173.8	206.2	261.0
Պաշտպանություն	36.8	44.3	52.5	28.6	33.3	39.3	48.0
Հասարակական կարգի պահպանություն	15.9	19.9	23.2	11.0	13.9	15.3	20.8
Կրթություն և գիտություն	29.1	32.9	45.2	19.0	23.4	30.0	39.7
Առողջապահություն	14.8	18.9	24.3	7.7	12.7	15.1	19.4
Սոց. ապահովագրություն և ապահովություն	23.8	29.3	35.3	20.0	20.5	25.7	32.0
Ընթացիկ ծախսեր	210.4	214.5	252.8	143.2	155.1	180.6	208.7
Աշխատավարձ	20.9	13.9	24.3	13.9	7.7	16.3	22.2
Տոկոսավճարներ	15.7	11.3	9.8	11.2	9.1	7.6	6.9
Սուբսիդիաներ	8.2	15.1	18.4	6.7	11.6	14.8	12.8
Ընթացիկ տրանսֆերտներ	47.8	43.9	60.1	32.2	31.2	44.6	52.9
Ապրանքներ և ծառայություններ	117.8	130.3	140.1	79.2	95.5	97.2	113.9
Կապիտալ ծախսեր	13.6	21.6	32.7	9.0	12.5	17.5	42.0
Վարկավորում հանած մարում	11.8	5.8	10.5	10.0	6.3	8.1	10.3
Դեֆիցիտի ֆինանսավորում	7.8	-8.1	-2.0	2.4	2.3	-5.0	3.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-սեպտեմբերի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.6	13.1	13.2	15.0	14.1	14.2	14.6
Ավելացված արժեքի հարկ	7.0	6.6	6.2	7.7	7.2	6.7	6.8
Շահութահարկ	1.3	1.1	1.7	1.5	1.1	1.7	2.4
Եկամտահարկ	0.9	1.0	1.1	1.0	1.1	1.2	1.3
Ակցիզային հարկ	2.6	2.4	2.1	2.9	2.7	2.4	2.0
Պաշտոնական տրանսֆերտներ	1.2	0.6	0.5	0.9	0.3	0.4	0.2
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	17.3	14.9	15.6	18.5	16.5	16.6	18.1
Պաշտպանություն	2.7	2.7	2.8	3.3	3.2	3.2	3.3
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.2	1.3	1.3	1.2	1.4
Կրթություն և գիտություն	2.1	2.0	2.4	2.2	2.2	2.4	2.8
Առողջապահություն	1.1	1.2	1.3	0.9	1.2	1.2	1.3
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.8	1.9	2.3	1.9	2.1	2.2
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.6	0.5	0.1	0.3	0.2	0.4	0.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՁՀ կենտրոնի հաշվարկներ: